ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 27.06.2022թ. N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24-3» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«23» դեկտեմբերի 2022թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Բալդրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 27.06.2022թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24-3» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ում «ենթակա քանակը /հետագայում պահանջվող ֆինանսական միջոցների շրջանակում» սյունակում նշված 270 հատ սեղանի համակարգիչներից 17 հատ սեղանի համակարգիչների մասով 8 530 909,06 (ութ միլիոն հինգ հարյուր երեսուն հազար ինը հարյուր ինը դրամ վեց լումա) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը և ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին.

1.1. առկա ֆինանսական միջոցների շրջանակում Համաձայնագրով ձեռք բերվող ապրանքների համար մատակարարման ժամկետ սահմանել Պայմանագրով (Համաձայնագրով) նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 27-ը ներառյալ:

1.2. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կողյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Չարենց փ. 37
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01815551
Հ/Հ՝ 900011005841, 900011025757	Հ/Հ՝ 2050022067171001
ՀՀ ՖՆ գանձարանական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան	Տնօրեն՝ Ա. Բալդրյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 23 » դեկտեմբերի 2022թ. կնքված N 2 համաձայնագրի

(Հավելված N 3
« 27 » « 06 » 2022թ. կնքված
N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24-3» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
900011005841															
3	30211220/503	Սեղանի համակարգիչ ներ	-	-	-	-	-	-	70,254,545.2	70,254,545.2	70,254,545.2	140,509,090.4	140,509,090.4	140,509,090.4	**140,509,090.4**
900011025757															
3	30211220/4	Սեղանի համակարգիչ ներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	8,530,909.06	**8,530,909.06**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ԳՆՈՐԴ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011005841, 900011025757
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
ՅՈՒՆԻՔՈՄՖ ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Չարենց փ. 37
ՀՎՀՀ՝ 01815551
Հ/Հ՝ 2050022067171001
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Բալդրյան

/ստորագրություն/
Կ.Տ